

Հիւանդութեան գլխաւոր ախտանշանները կարելի է հեշտութեամբ նկատել հասակն առած կամ թէ մանկութեան հասակն անցած հիւանդների վրայ: Չարագուշակ ախտանշաններն են՝ անտանելի գլխացաւ, ոսկրացաւ, ցնցումներ, դառանցանք, քութէշի նման բշտիկների և կէտերի գոյանումն ամբողջ մարմնի վրայ: Ամենաչնչին շօշափումն անգամ անտանելի ցաւ է պատճառում հիւանդին: Հիւանդի զարկերակը շատ փոփոխական է լինում, մէկ տենդային դրութիւն է արտայայտում, մէկ էլ բնական կերպարանք է ստանում: Այդ դրութեամբ հիւանդութիւնը կարող է 4-6 շաբաթ տևել և այդ ժամանակամիջոցին յաճախ հիւանդութիւնն այնպիսի սուր կերպարանք է ստանում, որ հիւանդները (գլխաւորապէս հասակաւորներ) 3-4 օրուայ ընթացքում մեռնում են: Բայց լինում են դէպքեր, երբ հիւանդութիւնը շատ արագ և լաւ է անցնում:

Կօստրակտուրայի ամենածանր երևոյթի հետևանքները, այսինքն խլութիւն, կուրութիւն, ապշութիւն և այլն, ցոյց են տալիս, որ ուղեղի բորբոքումը մինչև նեարդերի արմատներն է տարածւում:

1887 թուից Վիեննայի բժիշկ Վեկսելբաումը գտել է կօստրակտուրայի համաճարակ տեսակի մանրէն (ДИПЛОККОКЪ): Փոքր դեր չէ կատարում և մարդու կազմուածքի առանձնայատկութիւնը: Սլափիկայում վերոյիշեալ մանրէն գտնուել է նոյն իսկ առողջ երեխայի քթի լորձամաշկի արտաթորութեան մէջ: Բժիշկ Ֆրանկն ասում է, որ այդ հիւանդութեան դէմ բժշկականութիւնը ոչ մի միջոց չունի, այնպէս որ ստիպուած են լինում նրա առանձին երևոյթների դէմ մաքրուել: Նա անհրաժեշտ է գտնում—հիւանդներին առանձնացնելը, ֆիզիքական և հոգեկան բացարձակ հանգստութիւն, և յաճախակի վաննաներ

ՕՐ. ՆՈՒԱՐԻ ԱՂԱՆԵԱՆՑ

Երիտասարդ ճարտարապետ-տեխնօլոգ Յովհաննէս Խիզանեանը ձեռնարկել է մի կարևոր և մեծ աշխատութեան.—նա կազմում է հայկական ճարտարապետութեան և հնախօսութեան վերաբերեալ մի ընդարձակ գործ, որի մէջ պէտք է մտնեն Հայոց վանքերի և հնութիւնների մեծ թուով գունաւոր և սև պատկերներ: Մենք առիթ ունեցանք տեսնել նորա՝ այդ նպատակի համար նկարած մի քանի իւղաներկ մեծադիր պատկերները՝ Մեծ ու փոքր Մասիսների, Սանահնի կամրջի, Հաղբատի ներսի մի տեսարանի և այլն, բոլորն էլ գեղարուեստական ընտիր գործեր, որոնց մանրանկարները պիտի մտնեն յիշեալ աշխատութեան մէջ:

Այդ գործի հրատարակութիւնը հաշուած է 15—20 հազար ուրբի: